ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

19.03.2026թ.
ք. Երևան ժամը 15^{30}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿՀՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ՝ Ա. Ասատրյան,
ՀՀ ՋՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿՀՏԱ բաժնի ավագ սպա՝ Խ. Երիցյան,
ՀՀ ՋՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿՀՏԱ բաժնի ավագ սպա՝ փոխգնդապետ՝ Վ. Ծատրյան:

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Գ. Պողոսյան:

«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Պողոսյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ԲՄ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ԲՄ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Գ. Պողոսյան)

2.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«ՆՕՐԴ» ՍՊԸ
2	«Տենդեր Գրուպ» ՍՊԸ
3	«ԺՈՋԵՖ ԿՈՄԵՐՑ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
4	«ՄԱԺԷՎ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ԲՄ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Գ. Պողոսյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի՝ էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «ՆՕՐԴ» ՍՊԸ-ի, մասնավորապես՝

«ՆՕՐԴ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերում՝ հավելված 1.1-ում, նշված չեն «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող, առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 19.03.2026թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

24.03.2026թ. ժամը 10:30 շարունակելով հայտերի բացման և գնահատման նիստը գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ բոլոր մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են պահանջվող շտկումները որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Պողոսյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

ՀՀ	Գնման առարկայի				Մրցույթին մասնակցող կազմակերպությունների			
	անվանումը	Չ/Մ	Քանակը	Գնման գինը	անվանումները	գնային առաջարկները		
						առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	լիթիումային կուտակիչներ	հատ	150	14 940 000	«ՄԱԺԷՎ» ՍՊԸ	10 937 500	2 187 500	13 125 000
					«ՆՕՐԴ» ՍՊԸ	11 495 000	2 299 000	13 794 000
					«Տենդեր Գրուպ» ՍՊԸ	11 870 000	2 374 000	14 244 000
					«ԺՈՋԵՖ ԿՈՄԵՐՑ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	14 940 000	0	14 940 000

3.2 Մասնակցի գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում բանակցություններ չեն կազմակերպվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ԲՄ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Գ. Պողոսյան)

4.1 24.03.2026թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ընտրված մասնակից ճանաչվեց «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Գ. Պողոսյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)՝ Ա. Ասատրյան

Գնահատող՝ Խ. Երիցյան

Գնահատող՝ Վ. Ծատրյան

Գնումները համակարգող՝ Գ. Պողոսյան